Միքայել Նալբանդյան

Հայ մարդու հայրենիքը

Հայ մարդ, հայ ազգ, ասա՛, արդյոք
Ո՛րտեղ է քո հայրենիքդ .
Կամ ունի՞ս դու որևիցե,
Ո՛վ են արդյոք ազգակիցքդ:

Հայ մարդ, ասա՛, ո՞ւր է տունդ,
Հայ մարդ, ո՛րտեղ քո կենտրոնդ,
Ունի՞ս մի բան քեզ սեփական .
Ցույց տուր ինձ դու քո պարծանքդ:

«Ի՞նչ հայրենիք, հիմար զքեզ,
Հարցանում ես դու ինձանից .
Ուր եմ ծնած, ա՞յդ ես քննում .
Այստեղ եկած եմ Թիֆլիզից:

Ես տուն ունիմ և այն քարյա
Երկու հարկով շենք փառավոր .
Ծառաներիս թիվը չը կա,
Իմ հյուրերը հարյուրավոր:

Եղբարք ունիմ, ունիմ որդիք,
Դստերք ու այլ շատ ազգական .
Ընտիր ծանոթը, շատ մեծատունք

Ունիմ փեսա և այն իշխան:

Իմ պարծա՞նքը, հիմա՛ր զքեզ .
Ցույց տուր ինձ դու հառաջ քոնը .
Ճաշ եմ ուտում, ազնիվ ընթրիք,
Որ չէ կերել Լուկուլլոսը:

Ես խմում եմ շամպայն, մադեռ,
Ուռցնում ես դու փորդ ջրով .
Ունիմ քանի տեսակ կառքեր,
Բայց դու ման ես գալիս ոտքով:

Ոսկի, արծաթ, գոհարեղեն,
Իմ պարծանքը, իմ գանձերը .
Թե դոցանով չես բավական,
Տե՛ս իմ երկու պատվի նշանք:

Դո ի՞նչ կենտրոն ես հարցանում,
Իմ կենտրոնը է իմ փորը .
Ոսկի, արծաթ, հարստություն,
Ահա կյանքիս լոկ խորհուրդը:

Բան եք ուսել, հիմար զքեզ,
Թե հայրենիք պիտի սիրել .
Բայց թե ի՞նչպես հարկավոր էր,
Ամենևին չկամիք լսել:

Ես սիրում եմ հայրենիքը,
Նորան միշտ ու միշտ գովում եմ .
Օտար ազգի առաջևը
Պակասությունքը ծածկում եմ:

Թե մի աղքատ կը գա իմ մոտ,

Նորան կը տամ ողորմություն .
Բայց թե ո՞րքան, կամ ի՞նչ չափով,
Այդ քո գործ չէ, ներողություն:

Ամենայն օր դուք մեր ազգը
Բամբասում եք անխղճմտանք,
Ազգի գլխից ձերպեսներով
Եկավ անցավ այնքան փորձանք . . .

Ողորմելի՛, դու կարծում ես,
Թե հայրենիքդ սիրելով
Բան կը շինես . սխալվում ես,
Այդպես հիմար մտածելով:

Քո ուսումը չէ կշտացնում
Իմ, կամ իմպեսների փորը .
Մեզ պիտո է հարստություն,
Որ պարարենք մեր մարմինը:

Հոգու համար ուսում պետք չէ,
Ո՛ր սուրբերը ուսյալ էին .
Կրոնի ծեսերը պահելով,
Անշուշտ կերթամ արքայություն»:

Ուրախացի՛ր, դու Հայաստան,
Լսելով քո որդու խոսքը .
Փառք ու պատիվ քե՛զ կը բերեն
Քո մարմնապաշտ մեծատունքը: